«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

N-h-72-h-4 13.01.2015

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանին

Հարգելի պարոն Աշոտյան,

«Հետք»-ը հոդված է պատրաստում «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային(թեմատիկ) ֆինանսավորման» 2013թ. կազմակերպված երկամյա դրամաշնորհային մրցույթի վերաբերյալ, ինչի համար մեզ անհրաժեշտ է հետևյալ տեղեկատվությունը:

1) Ձեր 51-Ա/Ք հրամանով կազմվել է այս դրմաշնորհային մրցույթի հայտարարությունը: Հրամանի 4.2 կետով սահմանվել. «Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են Խորհուրդներին՝ **Կոմիտեի փորձագետների շտեմարանում ընդգրկված փորձագետների** ներգրավմամբ գիտական փորձաքննություն իրականացնելու համար»: Տեղեկանալ ու համար, թե ովքեր են հայտերը գնահատած փորձագետները, մենք դիմել ենք Կոմիտեին, և ստացել պատասխան, որ նրանց անունները գաղտնի տեղեկատվություն են՝ «միջազգային չափանիշների համապատասխան»: Միևնույն ժամանակ մրցույթի հատարարությամբ, և մրցույթը կարգավորող հայաստանյան որևէ իրավական ակտով հայտերը գնահատող փորձագետների ցանկը գաղտնի տեղեկատվություն չի համարվում: Խնդրում ենք տեղեկացնել, թե ովքեր են Գիտության պետական կոմիտեի շտեմարանում ընդգրկված փորձագետները:
2) Ձեր 51-Ա/Ք հրամանը կազմվել է՝ համաձայն ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային(թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 1122-Ն որոշման: Այս որոշման 3-րդ կետով սահմանված է. «Հայտերի գնահատման նպատակով նախարարության կողմից սահմանված կարգով ձևավորվում են մասնագիտական փորձագիտական խորհուրդներ (այսուհետև՝ խորհուրդ): Նախարարության կողմից ընդունվում և խորհուրդներին են տրամադրվում գիտական թեմաների հայտերը (այսուհետև՝ մրցույթի հայտեր): **Խորհուրդները փորձաքննության են ենթարկում, ընտրում գիտական թեմաների հայտերը և դրանք ներկայացնում նախարարություն՝ հաստատման**»: Կառավարության որոշումը չի նախատեսում, որ հայտերի գնահատմանը պետք է

մասնակցեն Գիտության պետական կոմիտեի շտեմարանում առկա, այն էլ՝ գաղտնի փորձագետներ: Խնդրում ենք պարզաբանել՝ ինչու է կրթության և գիտության նախարարն ընդունել կառավարության որոշմանը հակասող հրաման:

Կանխավ շնորհակալություն,
«Հետաքննող լրագրողներ» հ/կ-ի նախագահ, «Հետք» թերթի խմբագիր՝

Էդիկ Բաղդասարյան